




ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 8-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում տեղի է ունենում հոգևոր ճեմարանի 1973—1974 ուսումնական տարվա հանդիսավոր բացումը, որին ներկա են լինում տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, տ. Հուսիկ եպս. Սանթրույանը, Մայր Աթոռի միաբաններն ու պաշտոնյաները, հոգևոր ճեմարանի դասախոսներն ու ուսանողները և քաղմաթիվ հրավիրյալներ, որոնց թվում է Մայր Աթոռի բարերարներ բեյրութաբնակ տեր և տիկին Տանձիկյանները:

Հանդեսը սկսվում է «Հայր մեր»-ով: Ծեմարանի սաները հաջորդաբար երգում են ճեմարանի քայերգը և «Որք զարդարեցին» շարականը:

Մայր Աթոռի միաբան տ. Մուշեղ վրդ. Պետիկյանն ընթերցում է «Սերմնացանի առակը» Մարկոսի Ավետարանից (Դ 3—9): Այնուհետև բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Ժիրվանյանը:

Ծեմարանի սաների կատարմամբ հնչում է «Էջ Միածինն ի Հօռե» շարականը:

Վեհափառ Հայրապետը իր ողջույնի և օրհնության խոսքն է ասում հոգևոր ճեմարանի տեսչությանն ու դասախոսական կզամին և, իր խոսքն ուղղելով ուսանողներին, հատկապես շեշտում հետևյալը.

«Մենք իբրև ժողովուրդ քրիստոնյա ժողովուրդ ենք և հնագույն քրիստոնյա ժո-

ղովուրդներից մեկը: Հենց առաքելական դարերից սկսած Ավետարանի սերմերը տարածվել են Հայաստանի հողի վրա, հայ ժողովրդի սրտերից ներս, և հետո աստիճան առ աստիճան այդ սերմերը ծիլ են տվել, աճել, զարգացել և հասել այնպիսի պատմական մի պահի (Դ դարի սկզբին), երբ հրաշալի պայմանների և իրադրության մեջ ա. Գրիգոր Լուսավորչի ձեռամբ մեր ամբողջ ժողովուրդը դարձել է քրիստոնյա ժողովուրդ, Նոր Ուխտի ժողովուրդ:

Եվ նա այդպես էլ մնաց դարեր շարունակ՝ հակառակ բազում դժվարությունների, հալածանքների, կոտորածների նույնիսկ, սակայն այդ բոլորը մեր ժողովուրդը կարողացել է հաղթահարել և միշտ վերագտնել իրեն՝ իբրև նույն հայ ժողովուրդը, իբրև նույն քրիստոնյա ժողովուրդը: Այսօր էլ կացությունը նույնն է: Մեր ժողովուրդը նույն ճանապարհով է ընթանում, ինչպես ընթացել են նրա նախնիք վերջին մոտ երկու հազար տարիների ընթացքում: Այս մի քանի խոսքերից արդեն ուրվագծվեց ձեր գիտակցության առջև, թե ինչպիսի՜ նշանակություն ունի այսօր էլ մեր եկեղեցին, մեր քրիստոնյա հավատքը մեր ժողովրդի կյանքում թե՛ Հայաստանում և թե՛ արտասահմանի տարածքի վրա: Հետևաբար շատ դյուրին է հասկանալ, թե ինչպիսի նշանակություն ունեն մեր հոգևոր վարժարանները և նրանց հունձքը մեր եկեղեցական հոգևոր կյանքի առաջընթացի համար»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը իր օրհնությունն է տալիս ուսանողներին՝ ապա-

գալում նրանց ցանկանալով տեսնել հայ եկեղեցու և հայ ժողովրդի սպասավորների շարքում:

Այս հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և «Հայր մեր»-ով:

*
* *
*

Այս տարի հոգևոր ճեմարանը գործելու է նոր տեսչական կազմով: Հոգևոր ճեմարանի նախկին տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը իր խնդրանքն էր ներկայացրել Գերագույն հոգևոր խորհրդին՝ տեսչի պաշտոնից ազատվելու համար: Գերագույն հոգևոր խորհուրդը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, իր օգուտու 24 նիստում ընդառաջել է տեղի հոր գրավոր դիմումին և գոհունակությամբ արձանագրել իր բարձր գնահատականը՝ տեղի հոր բազմամյա տեսչական-դաստիարակչական օգտավետ գործունեության համար:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց հայտնել, որ Ինքը Մայր Աթոռի միաբան տ. Արիս Ծ. վրդ. Շիրվանյանին նշանակել է

հոգևոր ճեմարանի տեսուչ: Գերագույն հոգևոր խորհուրդն իր գոհունակությունն արձանագրեց հայրապետական այս որոշման առիթով և բարեմաղթություններ արեց նորընտիր տեսչին՝ իր ապագա տեսչական արդյունավետ գործունեության ճանապարհի վրա:

Ուսումնական այս նոր տարում հոգևոր ճեմարանի ուսմասվար է նշանակվել հոգևոր ճեմարանի նախկին սան և «Էջմիածին» ամսագրի նախկին քարտուղար արմ. Արամայիս Սահակյանը: Իսկ ճեմարանի շրջանավարտ և Մայր Աթոռի միաբան բարեշնորհ Սարգիս արկ. Սարգսյանը հրավիրվել է ԱՄՆ-ից՝ ստանձնելու ճեմարանում ավագ պերակացուի պաշտոնը՝ իրեն օգնական ունենալով Մայր Աթոռի միաբան կիսատարկավագ Աղվան Գառպարյանին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է հոգևոր ճեմարանի նորընտիր տեսչին, ուսմասվարին, վերակացուներին, դասախոսական կազմին և մաղթում նրանց ուժ ու կարողություն՝ հաջողությամբ կատարելու համար իրենց ուսումնական-դաստիարակչական գործը՝ ի պաշտոնություն Մայր Աթոռ և Էջմիածնի և ի մխիթարություն Հայոց Հայրապետի:

